ԴԱՏԱԿԱՆ ՈՒՆԿՆԴՐՈՒԹՅԱՆ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Եթե Դուք համաձայն չեք կոմսության որևէ որոշման հետ, Դուք կարող եք դատական ունկնդրություն պահանջել: Ունկնդրության հայց ներկայացնելու համար դուք ընդամենը 90 օր ժամանակ ունեք: 90 օրվա ժամկետը սկսվել է այն օրվանից, երբ կոմսությունը հանձնել կամ փոստով ուղարկել է Ձեզ սույն ծանուցումը:

Եթե Դուք դատական ունկնդրություն եք պահանջում <u>նախքան</u> դրամական օգնության, «Medi-Cal»-ի, սննդամթերքի կտրոնների կամ մանկական խնամքի ծառայությունների կապակցությամբ որոշման կիրարկումը, ապա՝

- ունկնդրությանը սպասելու ընթացքում՝ դրամական օգնություն և «Medi-Cal» ստանալու Ձեր իրավունքները կմնան անփոփոխ:
- ունկնդրությանը սպասելու ընթացքում մանկական խնամքի ծառայություններ ստանալու Ձեր իրավունքները կարող են մնալ անփոփոխ:
- սննդամթերքի կտրոններ ստանալու Ձեր իրավունքները կմնան անփոփոխ մինչև դրանց ժամկետի լրանալը կամ դատական ունկնդրությունը՝ կախված նրանից, թե որն ավելի շուտ տեղի կունենա:

Եթե դատական ունկնդրության արդյունքում որոշվի, որ մենք ճիշտ ենք, ապա Ձեզանից փոխհատուցում կպահանջվի Ձեր ստացած յուրաքանչյուր լրացուցիչ դրամական օգնության, սննդամթերքի կտրոնի կամ մանկական խնամքի ծառայության համար:

Եթե ցանկանում եք, որ մենք կրճատենք կամ դադարեցնենք Ձեր նպաստները մինչև դատական ունկնդրությունը, նշան դրեք ներքևում.

Այո, կրճատեք կամ դադարեցրեք՝ ☐ դրամական օգնությունը

☐ սննդամթերքի կտրոնները ☐ մանկական խնամքի ծառայությունները

Եթե դուք դատական ունկնդրության վճռին են սպասում՝

<u>Մասնագիտական վերապատրաստման համար տրամադրվող օգնության (Welfare to Work) կապակցությամբ, ապա՝</u>

Դուք պարտավոր չեք մասնակցել միջոցառումներին:

Դուք կարող եք ստանալ մանկական խնամքի համար նախատեսված վճարումները՝ զբաղվածության և սույն ծանուցումից առաջ կոմսության կողմից հաստատված միջոցառումների համար:

Եթե մենք Ձեզ հայտնել ենք, որ սոցիալական օգնության այլ ծառայությունների համար վճարումները դադարեցվելու են, ապա Դուք այլևս չեք վճարվի, եթե անգամ հաճախեք համապատասխան միջոցառմանը:

Եթե մենք Ձեզ հայտնել ենք, որ Դուք վճարվելու եք սոցիալական օգնության այլ ծառայությունների համար, ապա Դուք կստանաք վճարումները՝ սույն ծանուցման մեջ նշված չափով և եղանակով:

- Սոցիալական օգնության ծառայությունները ստանալու համար, Ձեզ հարկավոր է հաճախել կոմսության կողմից նշված միջոցառմանը:
- Եթե սոցիալական օգնության ծառայությունների գումարը, որը կոմսությունը վճարում է մինչև դատական ունկնդրությունը, բավարար չէ, որպեսզի Ձեզ թույլ տա մասնակ-ցել միջոցառմանը, Դուք կարող եք դադարեցնել Ձեր մասնակցությունը:

<u>«Cal-Learn» ծրագիրը</u>

- Դուք չեք կարող մասնակցել «Cal-Learn» ծրագրին, եթե մենք հայտնել ենք Ձեզ, որ չենք կարող Ձեզ սպասարկել:
- «Cal-Learn»-ի սոցիալական օգնության ծառայությունների համար մենք կվճարենք միայն այն դեպքում, եթե միջոցառումը հաստատվել է մեր կողմից:

ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Medi-Cal» կառավարվող խնամքի ծրագրի (Medi-Cal Managed Care Plan) անդամներին. Սույն ծանուցման մեջ նշված որոշմամբ կարող են դադարեցվել կառավարվող խնամքի Ձեր առողջապահական ծրագրի ծառայությունները: Եթե հարցեր ունեք, կարող եք դիմել Ձեր առողջապահական ծրագրի անդամների սպասարկման ծառայությանը:

Երեխաներին տրամադրվող և/կամ բժշկական օգնությունը. Երեխաներին տրամադրվող օգնության տեղական կազմակերպությունն անվճար կօգնի Ձեզ դրամահավաքի հարցում, եթե անգամ Դուք ընդգրկված չեք դրամական օգնություն ստացողների ցուցակում: Եթե նրանք այժմ նվիրատվություններ են հավաքում Ձեզ համար, ապա նրանք կշարունակեն այդ անել, քանի դեռ Դուք գրավոր կերպով չխնդրեք նրանց դադարեցնել դրամահավաքը: Նրանք կուղարկեն Ձեզ ներկայումս հավաքված գումարը, սակայն նախկինում կոմսությանը պարտք եղած գումարը կպահվի դրանից:

Ընտանիքի պլանավորում. Անհրաժեշտ տեղեկությունների համար դիմեք նպաստների տրամադրման Ձեր գրասենյակին:

Դատական ունկնդրության գործը. Եթե Դուք դատական ունկնդրություն եք պահանջել, ապա Դատական ունկնդրությունների նահանգային բաժանմունքը (State Hearing Division) Ձեզ համար առանձին գործ բաց կանի այդ կապակցությամբ: Դուք իրավունք ունեք ծանոթանալ Ձեր գործին՝ նախքան դատական ունկնդրությունը և ունկնդրությունից առնվազն երկու օր առաջ ստանալ Ձեր գործի կապակցությամբ կոմսության դիրքորոշման գրավոր օրինակը: Նահանգը կարող է Ձեր գործը հանձնել Նպաստների տրամադրման դեպարտամենտին և ԱՄՆ Առողջապահության և սոցիալական ծառայությունների, ինչպես նաև Գյուղատնտեսության դեպարտամենտներին: **(տես՝ «Նպաստների և հիմնարկությունների մասին օրենքների ժողովածուի» (W&I Code) 10850-րդ և 10950-րդ բաժինները:)**

ԴԱՏԱԿԱՆ ՈՒՆԿՆԴՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՀԱՄԱՐ՝

- **Լրացրեք այս թերթիկը:**
- Պատճենահանեք թերթիկի երկու կողմը՝ Ձեզ մոտ պահելու համար: Եթե դիմեք Ձեր սոցիալական աշխատակցին, նա Ձեզ կարող է տալ այս թերթիկի օրինակը:
- **Ուղարկեք կամ տարեք այս թերթիկը՝**

ԿԱՄ

- **Զանգահարեք 1-800-952-5253 կամ,** եթե լսողական կամ խոսելու դժվարություն ունեք և օգտվում եք TDD-ից՝ **1-800-952-8349 անվճար հեռախոսահամարներով:**

Օգնություն ստանալու համար՝ Դուք կարող եք զանգահարել ստորև նշված անվճար հեռախոսահամարով և իրավաբանական օգնություն ստանալ դատական ունկնդրության Ձեր իրավունքների կապակցությամբ: Դուք կարող եք անվճար իրավաբանական օգնություն ստանալ Ձեր տեղական իրավաբանական օգնության կամ նպաստների տրամադրման գրասենյակից:

Եթե Դուք չեք ցանկանում միայնակ ներկայանալ դատական ունկնդրությանը, կարող եք ներկայանալ որևէ բարեկամի կամ ցանկացած այլ անձնավորության հետ:

ԴԱՏԱԿԱՆ ՈՒՆԿՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՑ

Ես դատական ունկնդրություն եմ պահանջում _____ կոմսության Սոցիալական ծառայությունների դեպարտամենտի որոշման կապակցությամբ, որը վերաբերում է իմ՝

☐ դրամական օգնությանը ☐ սննդամթերքի կտրոններին ☐ «Medi-Cal»-ին

☐ Այլ (նշեք) _____

Որի պատճառով՝ _____

_____

_____

_____

_____

_____

☐ **Եթե տեղը չի բավականացնում, նշան դրեք այստեղ և թերթ ավելացրեք:**

☐ Ինձ հարկավոր է, որ նահանգն ինձ անվճար թարգմանիչ տրամադրի:

(Ունկնդրության ժամանակ Ձեր ազգականը կամ բարեկամը չեն կարող թարգմանել Ձեզ համար:)

Իմ լեզուն կամ բարբառն է՝ _____

ԱՅՆ ԱՆՁԻ ԱՆՈՒՆԸ, ՈՒՄ ՆՊԱՍՏՆԵՐԸ ՄԵՐԺՎԵԼ, ՓՈՓՈԽՎԵԼ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՎԵԼ ԵՆ		
ԾՆՆԴՅԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ		ՀԵՌԱԽՈՍԻ ՀԱՄԱՐԸ
ՓՈՂՈՑԻ ՀԱՍՑԵՆ		
ՔԱՂԱՔԸ	ՆԱՀԱՆԳԸ	ՓՈՍՏԱՅԻՆ ԻՆԴԵՔՍԸ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ		ԱՄՍԱԹԻՎ
ԱՅՍ ԹԵՐԹԻԿԸ ԼՐԱՑՆՈՂԻ ԱՆՈՒՆԸ		ՀԵՌԱԽՈՍԻ ՀԱՄԱՐԸ

☐ **Ես ցանկանում եմ, որ ներքոհիշյալ անձնավորությունը ներկայացնի ինձ այս դատական ունկնդրության ժամանակ: Ես այդ անձնավորությանն արտոնում եմ ծանոթանալ իմ գործին կամ իմ փոխարեն ներկայանալ ունկնդրությանը: (Այդ անձնավորությունը <u>կարող է լինել</u> Ձեր ազգականը կամ բարեկամը, սակայն նա չի կարող թարգմանել Ձեզ համար:)**

ԱՆՈՒՆԸ		ՀԵՌԱԽՈՍԻ ՀԱՄԱՐԸ
ՓՈՂՈՑԻ ՀԱՍՑԵՆ		
ՔԱՂԱՔԸ	ՆԱՀԱՆԳԸ	ՓՈՍՏԱՅԻՆ ԻՆԴԵՔՍԸ